ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԾՀԱՊՁԲ-1/6-12

ք. Երևան 15.07.2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Սուքիասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության պահեստ՝ ավան Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 73 114 320 (յոթանասուներեք միլիոն հարյուր տասնչորս հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 10-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ապրանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու

վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդը մեղմ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ նախադիր Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ ք. Երևան, Երզնկյան 4շ, բն 13
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 11500926005660
ՀԿՀՀ 00867415	ՀԿՀՀ 00130656
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	Տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հ/Հ. 00601672

«Մ-ԹՐԵՅԴԼԱՅՆ»
«M-TRADELINE»
«Մ-ՏՐԵՅԴԼԱՅՆ»
00130656

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-1/6-12 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ապրանքի անվանում	Բնութագրող հիմնական հատկանիշները
1	Էլեկտրականության չափման սարքեր (Տեստեր)	թվային էկրանով, 6*3 սմ, հաստատուն, փոփոխական հոսանքներ, դիմադրություն, միլիամպեր չափելու համար,ԴՏ-9208Ա: Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
2	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր (Սնուցման բլոկ PS-19 AC Coral)	Սնուցման բլոկ PS-19 AC Coral,POWER SUPPLY սնուցումը միաֆազ փոփոխական հոսանքից 220վ, 50 Հց (85~264 Վ/47~65 Հց), : Արտադրման տարեթիվ 2007թ. և բարձր
3	գողության դեպքում ահազանգման սարքեր (ԱՀՄ Կառավարման վահանակ)	Premier 8 գոտի մինչև 16-ը ընդլայնվելու հնարավորությամբ, 4 ենթահամակարգ, անխափան սնուցման համակարգ, ջերմաստիճանային տիրույթը -10 +50 C, համատեղելի Premier LCD 16 գոտու ստեղնաշարի ստեղնաշարի հետ, մուտքային լարումը 140-230վ, ելքային լարումը 12վ, հոսանքի ուժը 0.5 1.2Ա, աշխատունակության լուսային ինդիկացիա, հոսանքի թույլատրելի տատանման եռակի պաշտպանություն, իր մեջ ներառում է երկաթյա կամ պլաստմասե տուփ, սնուցման աղբյուր և մարտկոց 4.5Ա/ժ 12Վ: Արտադրման տարեթիվ 2014թ. և բարձր
4	գողության դեպքում ահազանգման սարքեր (ԱՀՄ Ահազանգիչ /սիրենա/)	Ահազանգիչ ՕՊՕՊ Սնուցման լարումը հաստատուն հոսանքից - 9-27վ Սպառումը 12վ սնուցման դեպքում՝ - ձայնային ազդարարի - մինչև 35մԱ - լուսային ազդարարի - մինչև 10մԱ Հեռավորության վրա ձայնային ճնշումը - մինչև 100դԲ Ձայնային ազդանշանի հաճախականության դիապազոն - 2-4կՀց, Աշխատանքային ջերմաստիճանը -25՝ +55՝: Արտադրման տարեթիվ 2014թ. և բարձր
5	հեռախոսային կայաններ (Մինի ԱՀԿ)	Panasonic KX-TDE100, մինչև 8 արտաքին և 64 ներքին գծեր, VoIP (H.323 v.2), E1 (QSIG, ISDN PRI EDSS-1, R2 DTMF/MFC/Pulse), ISDN BRI, E&M միացնող գծեր, թվային և անալոգային/ հեռախոսային ապարատների միացման հնարավորություն, ցանկացած անալոգային հեռախոսային ապարատի, ֆաքսերի և մոդեմների հետ համատեղելիություն, համակարգիչից ծրագրավորման հնարավորություն ցանցով, մոդեմով կամ Ինտերնետով: Համալրվածությունը՝ բազային կանգնակ Panasonic KX-TDE100, սնուցման բլոկ KX-TDA0104XJ, քարտեր՝ KX-TDA0170X – 1 հատ, KX-TDA0180XJ – 1 հատ, KX-TDA0290XJ – 1 հատ, KX-TDA0174XJ – 3 հատ, ամֆինոլ մալուխ 5 հատ: Արտադրման տարեթիվ 2014թ. և բարձր
6	հեռախոսային սարքեր (Հեռախոսային ապարատ SIP GXP1610)	Գրաֆիկական LCD դիսպլեյ, միաժամանակ 2 կանչի հնարավորություն, կիսադուպլեքս բարձրախոս, մինչև 500 հեռախոսահամարների գրառման հեռախոսագիրք, 200 զանգերի հիշողություն, 2 հատ 10/100 մբ/վ պորտ, պրոտոկոլներ SIP RF3261, TCP/IP UDT 802.1X, DNS DHCP, SSH, TLC, 13 հատուկ ֆունկցիոնալ ստեղներ, ձայնային կոդեկներ՝ G711, G722, G723, G726-732, RJ9 խրոցով միացման գարնիտուրայի հնարավորություն, սնուցումը 220Վ/50Հց, աշխատանքային պայմանները 0+40C, լրակազմը՝ հեռախոսային ապարատ GXP1610, խոսափող, սնուցման բլոկ, ցանցային մալուխ: Արտադրման տարեթիվ 2010թ. և բարձր
7	ռադիոկայաններ (ԳԿԱ տիրույթի ռադիոկայան)	ԳԿԱ տիրույթի ռադիոկայան ALINCO DJ V17L 36-48Mhz Զինվորական ստանդարտ MIL-STD810G C/D/E ջրակայուն, հաճախականության տիրույթը 30-37 ՄՀց / 35-50 ՄՀց, կապուղիների քանակը 16, ելքային հզորություն 6Վ, մոդուլյացիա 16KOF3E, հաճախականության քայլը 5 կՀց, սելեկտիվ կանչի հնարավորություն, կազմը՝ մարտկոց 7.2 Վ, մարտկոց 2000 մԱ/ժ 2 հատ, ալեհավաք, լիցքավորման սարք, բարձրախոս EMS-62, պատյան: Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
8	ռադիոհաճախականության վերահաղորդման կայաններ (ԳԿԱ տիրույթի վերահաղորդիչ)	ԳԿԱ տիրույթի թվային/անալոգային վերահաղորդիչ, 1 հատ ալեհավաքով, 1 հատ դուպլեքսերով և 30 մ ՌԿ-50 կոաքսալ մալուխով, շանթարգելով,միացուցիչներով,սնուցման բլոկով 220/13.8վ 25Ա, . հաճախականության տիրույթը 136-174 ՄՀց, ելքային հզորությունը 50տ, սնուցումը փոփոխական հոսանքից 220վ և հաստատուն հոսանքից 12վ, FM մոդուլյացիան 12.5 կՀց, թվային պրոտոկոլ ETSI-TS102, IP MULTISITE Connect ակտիվացիոն բանալին ներառյալ, XPT տրանկինգի ապահովում, RDAC համակարգ, գունավոր դիսպլեյով, 256բիթ թվային հաղորդման գաղտնագրում.հաճախականության կայունությունը ±0.5ppm: Թվային սարքի խոսակցական կոդավորումը AMBE++,: Արտադրման տարեթիվ

		2015թ. և բարձր
9	ռադիոկայաններ (Ռադիոկայան ԿԱ տիրույթի ICOM-IC-78 ռադիոկայան)	ICOM-IC-78 ռադիոկայան՝ Հաճախության տիրույթը՝ ընդունում-300ԿՀց-30 ՄՀց, հաղորդում-1.6 ՄՀց-30 ՄՀց Աշխատանքային ռեժիմը՝ SSB, CW, RTTY (FSK), AM, Հզորությունը՝ 100 վտ, Մնուցման լարումը՝ 13,8 Վ+-15% Վ, Կապուղիների քանակը՝ ոչ պակաս 100-ից, Սպառվող հոսանքի ուժը՝ ընդունում-2Ա, հաղորդում-20Ա: Աշխատանքային ջերմաստիճանը՝ -30C+60C: Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
10	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք MN-100Kb)	Դիպոլային ալեհավաք MN-100 KB՝ 1.5-30 ՄՀց հաճախականության տիրույթի, հզորությունը ոչ պակաս 100 Վտ (SSB 200 Վտ), կոպլեկտում՝ համաձայնեցնող սարք (բարձր հաճախականության մալուխի միացնող ռադիոկայանին համ-ելք UHF female), բացվացքը 2x8մ, 30մ բարձր հաճախականության ՌԿ-50 մալուխով: Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
11	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք AH-2B ավտոմոբիլային)	ավտոմոբիլային AH-2B՝ Հաճախության տիրույթը՝ 3.5 ՄՀց-50 ՄՀց Կանգուն ալիքի գործակիցը ոչ ավել 1.5 Հզորությունը ոչ պակաս ՝ 120 Վտ Աշխատանքային ջերմաստիճանը՝ -40C+60C: Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
12	հեռահաղորդակցման միջոցներ (Տյուներ AT-130 ալեհավաքի ավտոմատ)	Ալեհավաքի ավտոմատ տյուներ AT-130՝ Հաճախության տիրույթը՝ 1.6 ՄՀց-30 ՄՀց Հզորությունը ոչ պակաս՝ 150 Վտ Աշխատանքային ջերմաստիճանը՝ -30C+60C: Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
13	սնուցման բլոկ (Սնուցման բլոկ DM-330MV 13,8 Վ, 30Ա)	DM-330MV 13.8V 30A՝ Մտնող լարումն մեծությունը՝ AC 220 V +/- 10% Ելքային լարումն մեծությունը կարգավորվող՝ DC 5-15 V, ելքային լարումն մեծությունը խախտումը 2% պակաս, ելքային հոսանքի մեծությունը՝ 30A max/ 25A nominal, Մտնող հոսանքի մեծությունը մինչև 2 Ա, Լարման և հոսանքի ինդիկատոր, գերբեռնվածության ավտոմատ անջատիչ: Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
14	ռադիոկայաններ (ԿԱ տիրույթի ռադիոկայան VX-1700 1ԿՎ Հզորության ուժեղացուցիչով)	VX-1700, Հաճախության տիրույթը՝ ընդունում-0,03-30 ՄՀց, հաղորդում-1.6 ՄՀց-30 ՄՀց Աշխատանքային ռեժիմը՝ SSB, CW, RTTY (FSK), AM, Հզորությունը՝ 125 վտ, սնուցման աղբյուր՝ փոփոխական հոսանքի FP-1030A13,8Վ 25Ա, Կապուղիների քանակը՝ ոչ պակաս 200-ից, Սպառվող հոսանքի ուժը՝ ընդունում-2Ա, հաղորդում-25-30Ա, կոմուտացիոն մալուխ Band Data CT -56, Աշխատանքային ջերմաստիճանը՝ -30C+60C 1ԿՎ Հզորության ուժեղացուցիչ Հաճախության տիրույթը՝ հաղորդում-1.6 ՄՀց-30 ՄՀց Աշխատանքային ռեժիմը՝ SSB, CW, RTTY (FSK), AM, Հզորությունը՝ 1Կվտ, սնուցման աղբյուր՝VP1000 Մուտքային լարումը 100 - 240Վ, ելքային լարումները DC +48 Վ, DC +12 Վ,-12Վ DC, Սպառվող հոսանքի ուժը՝ հաղորդում-25-30Ա, Հզորության ուժեղացուցիչի 2 մուտք, ուժեղացուցիչից 4 ելք տարբեր ալեհավաքների միացման կոմուտատորով, հաղորդիչ ալեհավաք 1 կՎտ հզորությամբ, աշխատանքային ջերմաստիճանը՝ -30C+60C,: Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
15	ռադիոընդունիչներ (Ռադիոընդունիչ ICOM-IC-R75)	ICOM-IC-R75 ռադիոընդունիչ դիպոլային ալեհավաքով MN-100 KB, 1.5-30 ՄՀց հաճախականության տիրույթի, 30մ բարձր հաճախականության ՌԿ-50 մալուխով՝ Հաճախության տիրույթը՝ ընդունում -0.03-60 ՄՀց, Աշխատանքային ռեժիմը՝ USB, LSB, CW, AM, FM, WFM, Սնուցման լարումը՝ 13,8 Վ+-15% Վ, Կապուղիների քանակը՝ ոչ պակաս 100-ից, Սպառվող հոսանքի ուժը՝ ընդունում-1.1/0.9Ա Զգայունություն՝ 0,1-1,8 ՄՀց - 2 ՄկՎ, 1,8-29,99 ՄՀց - 0,16 ՄկՎ, 50-54 ՄՀց - 0,13 ՄկՎ, Աշխատանքային ջերմաստիճանը՝ -30C+60C: Արտադրման տարեթիվ 2010թ. և բարձր
16	ռացիաներ (Ռադիոկայան ICOM-IC-F 5026H ալեհավաքով)	ICOM-IC-F5026H ռադիոկայան COMET M72S ալեհավաքով, ծրագրավորման փաթեթով՝ Հաճախության տիրույթը՝ 146-174ՄՀց, Սնուցման լարումը՝ 13,6 Վ, ելքային հզորությունը՝ 50Վտ կապուղիների քանակը՝ 128, 8 գոտի, Աշխատանքային ջերմաստիճանը՝ -20C+60C, քաշը ոչ պակաս քան 1100 գ: Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
17	ռացիաներ (Ռադիոկայան ICOM-IC-F 6023H ալեհավաքով)	ICOM-IC-F6023H DIAMOND MC-201 (400-512) ալեհավաքով, ծրագրավորման փաթեթով ռադիոկայան՝ Հաճախության տիրույթը՝ 400-470ՄՀց, Սնուցման լարումը՝ 13,6 Վ, ելքային հզորությունը՝ 45Վտ կապուղիների քանակը՝ 128, 8 գոտի, Աշխատանքային ջերմաստիճանը՝ -20C+60C, քաշը

		ոչ պակաս քան 1100 գ: Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
18	ռացիաներ (Ռադիոկայան Alinco)	ALINCO DR-438 DIAMOND UHF MC-201 (400-512) ալեհավաքով, ծրագրավորման փաթեթով ռադիոկայան՝ Զինվորական ստանդարտ MIL-STD810G C/D/E, Հաճախության տիրույթը՝ 400-470ՄՀց, Սնուցման լարումը՝ 13,6 Վ, ելքային հզորությունը՝ 45Վտ կապուղիների քանակը՝ 128, 8 գոտի, Աշխատանքային ջերմաստիճանը՝ -20C+60C: Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
19	խրոցների եղանիկներ և վարդակներ (Խրոց 6023H ռ/կ-ի ալեհավաքի)	ICOM-IC-F 6023H ռադիոկայանի ալեհավաքի խրոց, UHF-Male-պապա տիպի սեղմովի,: Արտադրման տարեթիվ 2016թ. և բարձր
20	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք DIAMOND)	DIAMOND Աշխատանքային հաճախականության տիրույթը 30-50ՄՀց, աշխատանքային հզորությունը 50 Վտ,: Արտադրման տարեթիվ 2016թ. և բարձր
21	հեռախոսային կայաններ (Մինի ԱՀԿ)	Panasonic KX-TDA100, մինչև 8 արտաքին և 64 ներքին գծեր, VoIP (H.323 v.2), E1 (QSIG, ISDN PRI EDSS-1, R2 DTMF/MFC/Pulse), ISDN BRI, E&M միացնող գծեր, թվային և անալոգային/ հեռախոսային ապարատների միացման հնարավորություն, ցանկացած անալոգային հեռախոսային ապարատի, ֆաքսերի և մոդեմների հետ համատեղելիություն, համակարգիչից ծրագրավորման հնարավորություն ցանցով, մոդեմով կամ համացանցով: Համալրվածությունը՝ բազային կանգնակ Panasonic KX-TDE100, սնուցման բլոկ KX-TDA0104XJ, քարտեր՝ KX-TDA0170X – 1 հատ, KX-TDA0180XJ – 1 հատ, KX-TDA0290XJ – 1 հատ, KX-TDA0174XJ – 3 հատ, ամֆինոլ մալուխ 5 հատ:: Արտադրման տարեթիվ 2014թ. և բարձր
22	հեռախոսային կայաններ (Մինի ԱՀԿ)	Panasonic KX-TDA200, մինչև 128 արտաքին և 256 ներքին գծեր, 128 մոբիլ աբոնենտ, միկրոբջջային գիծ DECT ստանդարտի, VoIP (H.323 v.2), E1 (QSIG, ISDN PRI EDSS-1, R2 DTMF/MFC/Pulse), ISDN BRI, E&M միացնող գծեր, 3 անկախ /2 թվային և 1 անալոգային/ հեռախոսային ապարատների միացման հնարավորություն, ցանկացած անալոգային հեռախոսային ապարատի, ֆաքսերի և մոդեմների հետ համատեղելիություն, համակարգիչից ծրագրավորման հնարավորություն ցանցով, մոդեմով կամ համացանցով: Համալրվածությունը՝ բազային կանգնակ Panasonic KX-TDE200ՌՈՒ, սնուցման բլոկ KX-TDA0103XJ, քարտեր՝ KX-TDA0180X – 1 հատ, KX-TDA0170XJ – 1 հատ, KX-TDA0290XJ – 2 հատ, KX-TDA0174XJ – 6 հատ, ամֆինոլ մալուխ 8 հատ: Արտադրման տարեթիվ 2014թ. և բարձր
23	ցանցային բաժանարար (Մոդեմ DSL)	E1 համակարգի համակցման հնարավորություն, ETSI ETR152 (RTR/TH – 03036) ստանդարտ, DS-HDMOD, արագությունը 2 mb/վայրկյան, երկլարային 2X2W 1168 Կբ/վ տվյալների փոխանցման հնարավորությամբ, սնուցումը 220Վ/48Վ ռեգեներատորի հեռահար սնուցման հնարավորությամբ, սպառվող հոսանքը 10-50 մԱ, ինտերֆեյս NX64/V.11 USER INTERFECA, 3.2 կմ առանց աղմուկի հաղորդման հնարավորություն: Փոխանցման արագությունը/ֆորմատ - 2048 kbit/s 30B+D (ISDN-PRA I.431); n x 64 kbit/s Fractiwnal E1 or n x 64 kbit/s, E1 հոսքի timeslot-ների առանձնացում Ethernet պորտի համար, գծային արագություն - 1 x 2320 kbit/s or 2 x 1168 kbit/s, գծային կոդավորում - PAM16/CAP/2B1Q, ULAF+ 2E1 + Ethernet, ծրագրային ապահովում,: Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր

Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված, գործարանային փաթեթավորման տուփի մեջ:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի պաշտ.

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՍՈՒՐԻԱՍՅԱՆ

Հ/Վ. 00601672

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-1/6-12 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափա բաժնի համար	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Մեկ միավ. գին /դրամ/	Ընդհանուր գումար /դրամ/	Ապրանքի մատակարարումը 2017թ.՝ ըստ եռամսյակների
						3-րդ եռամսյակ
1	էլեկտրականության չափման սարքեր (Տեստեր)	հատ	50	4650	232500	50
2	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր (Սնուցման բլոկ PS-19 AC Coral)	հատ	2	666810	1333620	2
3	գողության դեպքում ահազանգման սարքեր (ԱՀՄ Կառավարման վահանակ)	հատ	5	37200	186000	5
4	գողության դեպքում ահազանգման սարքեր (ԱՀՄ Ահազանգիչ /սիրենա/)	հատ	100	2325	232500	100
5	հեռախոսային կայաններ (Մինի ԱՀԿ)	հավաք ածու	2	1116000	2232000	2
6	հեռախոսային սարքեր (Հեռախոսային ապարատ SIP GXP1610)	հատ	20	18600	372000	20
7	ռադիոկայաններ (ԳԿԱ տիրույթի ռադիոկայան)	հավաք ածու	40	167400	6696000	40
8	ռադիոհաճախականության վերահաղորդման կայաններ (ԳԿԱ տիրույթի վերահաղորդիչ)	հավաք ածու	5	1553472	7767360	5
9	ռադիոկայաններ (Ռադիոկայան ԿԱ տիրույթի ICOM-IC-78 ռադիոկայան)	հավաք ածու	20	281790	5635800	20
10	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք MN-100Kb)	հավաք ածու	15	99324	1489860	15
11	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք AH-2B ավտոմոբիլային)	հավաք ածու	15	176328	2644920	15
12	հեռահաղորդակցման միջոցներ (Տյուներ AT-130 ալեհավաքի ավտոմատ)	հավաք ածու	15	143220	2148300	15
13	սնուցման բլոկ (Սնուցման բլոկ DM-330MV 13,8 Վ, 30Ա)	հավաք ածու	30	79124	2373720	30
14	ռադիոկայաններ (ԿԱ տիրույթի ռադիոկայան VX-1700 1ԿՎ Հզորության ուժեղացուցիչով)	հավաք ածու	4	3454020	13816080	4
15	ռադիոընդունիչներ (Ռադիոընդունիչ ICOM-IC-R75)	հավաք ածու	30	327360	9820800	30
16	ռացիաներ (Ռադիոկայան ICOM-IC-F 5026H ալեհավաքով)	հավաք ածու	20	109740	2194800	20
17	ռացիաներ (Ռադիոկայան ICOM-IC-F 6023H ալեհավաքով)	հավաք ածու	20	109740	2194800	20
18	ռացիաներ (Ռադիոկայան Alinco)	հավաք ածու	20	103230	2064600	20
19	խրոցների եղանիկներ և վարդակներ (Խրոց 6023H ռ/կ-ի ալեհավաքի)	հատ	200	837	167400	200
20	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք DIAMOND)	հատ	20	14400	288000	20

21	հեռախոսային կայաններ (Մինի ԱՀԿ)	հավաք ածու	3	1116000	3348000	3
22	հեռախոսային կայաններ (Մինի ԱՀԿ)	հավաք ածու	1	1160160	1160160	1
23	ցանցային բաժանարար (Մոդեմ DSL)	հատ	10	471510	4715100	10

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի պ/կ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ

տնօրեն

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հ/Հ. 00601 6729

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-1/6-12 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հ/հ	Գնման առարկան	CPV կոդ	*Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների բայց ոչ ուշ քան 10.12.2017թ						
				հուլիս	օգոստոս	սեպտ.	հոկտ.	նոյեմբ.	դեկտեմբեր
1	էլեկտրականության չափման սարքեր (Տեստեր)	38551400/1/4/2		232500	232500	232500	232500	232500	232500
2	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր (Սնուցման բլոկ PS-19 AC Coral)	32541400/3/4/2		1333620	1333620	1333620	1333620	1333620	1333620
3	գողության դեպքում ահազանգման սարքեր (ԱՀՄ Կառավարման վահանակ)	31625300/3/4/2		186000	186000	186000	186000	186000	186000
4	գողության դեպքում ահազանգման սարքեր (ԱՀՄ Ահազանգիչ /սիրենա/)	31625300/5/4/2		232500	232500	232500	232500	232500	232500
5	հեռախոսային կայաններ (Մինի ԱՀԿ)	32551120/1/4/4		2232000	2232000	2232000	2232000	2232000	2232000
6	հեռախոսային սարքեր (Հեռախոսային ապարատ SIP GXP1610)	32551160/4/4/2		372000	372000	372000	372000	372000	372000
7	ռադիոկայաններ (ԳԿԱ տիրույթի ռադիոկայան)	32341330/1/4/4		6696000	6696000	6696000	6696000	6696000	6696000
8	ռադիոհաճախականության վերահաղորդման կայաններ (ԳԿԱ տիրույթի վերահաղորդիչ)	32231300/1/4/4		7767360	7767360	7767360	7767360	7767360	7767360
9	ռադիոկայաններ (Ռադիոկայան ԿԱ տիրույթի ICOM-1C-78 ռադիոկայան)	32341330/2/4/4		5635800	5635800	5635800	5635800	5635800	5635800
10	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք MN-100Kb)	32351150/1/4/4		1489860	1489860	1489860	1489860	1489860	1489860
11	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք AH-2B ավտոմոբիլային)	32351150/2/4/4		2644920	2644920	2644920	2644920	2644920	2644920
12	հեռահաղորդակցման միջոցներ (Տյուներ AT-130 ալեհավաքի ավտոմատ)	32521300/1/4/4		2148300	2148300	2148300	2148300	2148300	2148300
13	սնուցման բլոկ (Սնուցման բլոկ DM-330MV 13,8 Վ, 30Ա)	30237112/1/4/4		2373720	2373720	2373720	2373720	2373720	2373720
14	ռադիոկայաններ (ԿԱ տիրույթի ռադիոկայան VX-1700 1ԿՎ Հզորության ուժեղացուցիչով)	32341330/3/4/4		13816080	13816080	13816080	13816080	13816080	13816080
15	ռադիոընդունիչներ (Ռադիոընդունիչ ICOM-IC-R75)	32341300/2/4/4		9820800	9820800	9820800	9820800	9820800	9820800
16	ռացիաներ (Ռադիոկայան ICOM-IC-F 5026H ալեհավաքով)	32231700/1/4/4		2194800	2194800	2194800	2194800	2194800	2194800
17	ռացիաներ (Ռադիոկայան ICOM-IC-F 6023H ալեհավաքով)	32231700/2/4/4		2194800	2194800	2194800	2194800	2194800	2194800
18	ռացիաներ (Ռադիոկայան Alinco)	32231700/5/4/4		2064600	2064600	2064600	2064600	2064600	2064600

19	խրոցների եղանիկներ և վարդակներ (Խրոց 6023H ռ/կ-ի ալեհավաքի)	31221200/1/4/2		167400	167400	167400	167400	167400	167400
20	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք DIAMOND)	32351150/3/4/2		288000	288000	288000	288000	288000	288000
21	հեռախոսային կայաններ (Մինի ԱՀԿ)	32551120/4/4/4		3348000	3348000	3348000	3348000	3348000	3348000
22	հեռախոսային կայաններ (Մինի ԱՀԿ)	32551120/5/4/4		1160160	1160160	1160160	1160160	1160160	1160160
23	ցանցային բաժանարար (Մոդեմ DSL)	32421300/5/4/2		4715100	4715100	4715100	4715100	4715100	4715100

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ
տնօրեն
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հ/Հ. 006016729

«Մ-ԹՐԵՅԴԼԱՅՆ»
«M-TRADELINE»
«Մ-ТРЕЙДЛАЙН»
00130650

Հավելված N 4
N՝ ՇՀԱՊՁԲ-1/6-2 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ՇՀԱՊՁԲ-1/6.2 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————————ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
——————————ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ——— -ին կնքված N ————
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ———— — -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

———————————
ազգանուն, անուն

———————————
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

———————————
ազգանուն, անուն

———————————
ստորագրություն